ԱՍՏԾՈ ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐ
A RESTING PLACE FOR GOD

ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ.

- ԵՂԻՍԵՆ ՇՐՋՈՂ ՄԱՐԳԱՐԵ ԷՐ
- ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՆՐԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՆ — ՔԱՂԱՔԻ ՄԱՐԴԿ, ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ, ՈՐԲԵՎԱՅՐԻ ԿԻՆԸ, ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ
- ԴԱՏԱՐԿ ԿՈՒԺԵՐԻ ՄԵՋ ՅՈՒՂ ԼՅՐԵՑ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Դ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ 4:8-37

8 Մի օր Եղիսեն անցնում էր Սունամով: Այնտեղ մի հարուստ կին կար.

ԲԱՆԱԼԻ ԲԱՌ. SHUNEM = ԿՐԿՆԱԿԻ ՀԱՆԿՍՏԱՎԱՅՐ – ՇՈՒՆԷՅՄ (ՀԵՍՈՒ 19:18, 1 ԹԱԳ. 28:4)

նա ստիպեց նրան իր տանը հաց ուտել: Եվ քանի անգամ որ Եղիսեն անցնում էր այնտեղով, գնում էր այնտեղ հաց ուտելու: 9 Եվ նա ասաց իր մարդուն. «Գիտեմ, որ Աստծու այդ մարդը սուրբ է, որը միշտ անցնում է մեր մոտով: 10 Ե՛կ մի փոքր վերնասենյակ շինենք տանիքի վրա և նրա համար այնտեղ անկողին, սեղան, աթոռ և աշտանակ դնենք, որ երբ մեզ մոտ գա, գնա այնտեղ»: 11 Մի օր էլ, երբ նա եկավ այնտեղ, գնաց վերնատուն և այնտեղ պառկեց:

Այսօր ես ուզում եմ խոսել չորս կարևոր կետերի մասին, որոնք մենք պետք է ընդօրինակենք, եթե ուզում ենք բախվել Աստծու զորությանը, ինչպես այս Սունեմացի կինը:

- ՆԱ ՅԱՆԿԱՑԱՎ ՈՂՋՈՒՆԵԼ ԱՍՏԾՈ ՄԱՐԴՈՒՆ
- ՆԱ ՏԵՂ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՆՐԱ ՀԱՄԱՐ
- ՆԱ ՍՏԱՑԱՎ ԱՍՏԾՈ ԽՈՍՏՈՒՄԸ
- ՆԱ ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՄԻՏՔ ՈՒՆԵՐ

I. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ:
MAKING GOD WELCOME.

8 նա ստիպեց նրան իր տանը հաց ուտել: Եվ քանի անգամ որ Եղիսեն անցնում էր այնտեղով, գնում էր այնտեղ հաց ուտելու: (One another brochure)

Հռոմեացիս 15:7– Դրա համար միմյանց ընդունե՛ք, ինչպես որ Քրիստոսը ձեզ ընդունեց Աստծու փառքի համար: ***(Sunday Morinings)***

Հռոմեացիս 12:13 – Սրբերի կարիքներին հաղորդակի՛ց եղեք, ***հյուրասիրությա՛ն հետևեք:***

Մատթեոս 25:35-40 – Որովհետև ***քաղցած էի,*** *և դուք ինձ ուտելիք տվեցիք,* ***ծարավ էի,*** *և ինձ խմելու բան տվեցիք,* ***օտար էի,*** *և ինձ ձեզ մոտ ընդունեցիք,* ***մերկ էի,*** *և ինձ հագցրիք,* ***հիվանդ էի,*** *և ինձ խնամեցիք,* ***բանտում էի,*** *և ինձ այցելեցիք": Այդ ժամանակ արդարները նրան կպատասխանեն ու կասեն. "Տե՛ր, ե՞րբ քեզ քաղցած տեսանք և կերակրեցինք, կամ ծարավ ու խմելու բան տվեցինք: Ե՞րբ քեզ օտար տեսանք ու մեզ մոտ ընդունեցինք, կամ մերկ և հագցրինք: Ե՞րբ քեզ հիվանդ տեսանք կամ բանտում ու քեզ այցելեցինք: Եվ թագավորը կպատասխանի ու նրանց կասի. "Ճշմարիտ եմ ասում ձեզ. քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, ի՛նձ արեցիք":*

II. ՏԵՂ ՏԱԼ ԱՍՏԾՈՒՆ:
MAKING ROOM FOR GOD.

9 Եվ նա ասաց իր մարդուն. «Գիտեմ, որ Աստծու այդ մարդը սուրբ է, որը միշտ անցնում է մեր մոտով: 10 Ե՛կ մի փոքր վերնասենյակ շինենք տանիքի վրա և նրա համար այնտեղ անկողին, սեղան, աթոռ և աշտանակ դնենք, որ երբ մեզ մոտ գա, գնա այնտեղ»: 11 Մի օր էլ, երբ նա եկավ այնտեղ, գնաց վերնատուն և այնտեղ պառկեց:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստծո ցանկությունը միշտ եղել է բնակվել Իր ժողովրդի մեջ...

*Բ Մնացորդաց 6:40-41 – 40 Այժմ, ո՛վ իմ Աստված, թող քո աչքերը բաց լինեն, և քո ականջները լսեն այստեղ արված աղոթքը: 41 Արդ, Տե՛ր Աստված, վե՛ր գնա քո **հանգստության տեղը,** դու և քո զորության տապանակը ելե՛ք և եկե՛ք ձեր **հանգստյան տեղը:***

*Գործ. 1:13 - 13 Եւ երբոր մտան, վեր ելան վերնատունը **որտեղ որ բնակվում էին...***

Գործ. 2:2,4 - 2 Եւ յանկարծակի երկնքիցը մի հնչիւն եղաւ՝ սաստիկ փչող քամու պէս, եւ լցրեց բոլոր տունը՝ ուր նստած էին: 4 Եւ ամենքը Սուրբ Հոգով լցուեցան...

Այսօր Աստծու ժողովրդին անհրաժեշտ է նույն փափագը ինչպես որ Դավիթն էր փափագում, որ Աստծո համար հանգստավայրը պատրաստի:

III. ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է ՄԵԶ ՀԵՏ ԻՐ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՎԱՅՐԻՑ:
GOD SPEAKS TO US FROM HIS RESTING PLACE.

12 Եվ իր ծառա Գեեզիին ասաց. «Կանչի՛ր այդ սունամացի կնոջը»: Նա կանչեց նրան, և կինը կանգնեց նրա առաջ: 13 Եվ ծառային ասաց. «Նրան ասա՛. Ահա այս ամբողջ աշխատանքն արել ես մեզ համար, հիմա ի՞նչ անեմ քեզ համար. թագավորի մոտ գործ ունե՞ս կամ զորագլխի մոտ»: Բայց կինն ասաց. «Ես գոհ եմ, որ իմ ժողովրդի մեջ եմ բնակվում»: 14 Եվ նա ասաց. «Ուրեմն ի՞նչ պետք է անել նրա համար»: Եվ Գեեզին ասաց. «Իրավ, ինքը որդի չունի, և մարդն էլ ծեր է»: 15 Եվ ասաց. «Կանչի՛ր նրան»: Նա կանչեց նրան, և կինը կանգնեց դռանը: 16 Եվ Եղիսեն ասաց. «Եկող տարի այս ժամանակ գրկիդ մի որդի կունենաս»: Եվ կինն ասաց. «Ո՛չ, տե՛ր իմ, Աստծո՛ւ մարդ, սուտ մի՛ ասա քո աղախնին»: 17 Կինը հղիացավ և մի որդի ծնեց հաջորդ տարին այդ նույն ժամանակ, ինչպես նրան ասել էր Եղիսեն:

IV. ՀԱՆԳԻՍՏ ՄՆԱՑԵՔ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՄԻՏՔ ՈՒՆԵՑԵՔ
KEEP CALM AND BE STRONG-MINDED

18 Երեխան մեծացավ և մի օր գնաց հնձվորների՝ իր հոր մոտ: 19 Եվ ասաց իր հորը. «Գլո՛ւխս, գլո՛ւխս»: Հայրն ասաց ծառային. «Նրան տա՛ր իր մոր մոտ»: 20 Նա վերցրեց նրան ու տարավ իր մոր մոտ, և նա մինչև կեսօր մնաց մոր ծնկների վրա ու մեռավ: 21 Կինը ելավ վեր, նրան պառկեցրեց Աստծու մարդու անկողնու վրա, դուռը կողպեց վրան ու գնաց: 22 Եվ իր մարդուն կանչեց ու ասաց. «Ծառաներից մեկին ուղարկի՛ր ինձ մոտ և էշերից էլ մի էշ, որ շտապ գնամ Աստծու մարդու մոտ ու ետ գամ»: 23 Եվ նա ասաց. «Ինչո՞ւ ես այսօր նրա մոտ գնում. ո՛չ ամսամուտ է, ո՛չ շաբաթ»: Կինն ասաց. «Հանգի՛ստ եղիր»:

- *Եվ ավելի ցավալի միտքը սա է. Աստված մեզ երջանկացնու՞մ է, որ հետագայում միայն մեր ցավն ավելացնի: Եթե Տերը տալիս է, ինչու է նա տանում:*
- *Ինչո՞ւ Աստված չկանխեց սա:*
- *ճգնաժամի պայմաններում մեր մտքերն ուղղված են դեպի Աստված, ով ներկա է և ում կարող ենք վստահել:*

24 Նա համետեց էշը և ասաց ծառային. «Քշի՛ր ու գնա՛, և մինչև քեզ չասեմ,
չկանգնեցնես»: 25 Նա գնաց ու հասավ Աստծու մարդուն Կարմեղոս սարի վրա: Երբ
Աստծու մարդը հեռվից տեսավ նրան, այդ ժամանակ իր ծառա Գեեզիին ասաց. «Սա
սունամացի այն կինն է: 26 Հիմա վազի՛ր, նրան դիմավորի՛ր և ասա՛ նրան. Ողջ-առո՞ղջ ես,
ողջ-առո՞ղջ է ամուսինդ, ողջ-առո՞ղջ է երեխադ»: Եվ նա ասաց. «Ողջ-առողջ ենք»: 27
Կինը գնաց սարը՝ Աստծու մարդու մոտ, և բռնեց նրա ոտքերից. Գեեզին մոտեցավ, որ
նրան ետ քաշի, բայց Աստծու մարդն ասաց. «Թո՛ղ դրան, որովհետև նրա սրտում ցավ կա,
և Տերը ծածկել է ինձնից և ինձ չի իմացրել»: 28 Ապա նա ասաց. «Ես իմ տիրոջից որդի
խնդրեցի՞, չասացի՞, որ ինձ մի՛ խաբիր»:

31 Գեեզին գնաց նրանցից առաջ և գավազանը դրեց երեխայի երեսին, բայց ո՛չ ձայն կար,
ո՛չ էլ կյանքի նշան: Եվ նա ետ դարձավ, դիմավորեց Եղիսեին ու պատմեց նրան՝ ասելով.
«Երեխան չզարթնեց»:

Եղիսեն աղոթեց Տիրոջը (էջ 33), ճիշտ ինչպես Եղիան ստիպված էր աղաղակել Տիրոջը (Գ Թագաւորաց 17:20, 21): Հրաշքը Եղիսեի գավազանում չէր, այլ Տիրոջն աղերսելու մեջ, ոչ թե մարգարեի զորության, այլ աղոթքի մեջ:

32 Երբ Եղիսեն մտավ տուն, տղան մեռած պառկած էր իր անկողնու վրա: 33 Նա ներս
մտավ, դուռը կողպեց իրենց երկուսի ետևից և աղոթեց Տիրոջը: 34 Վեր կացավ, պառկեց
երեխայի վրա ու իր բերանը դրեց նրա բերանին, իր աչքերը՝ նրա աչքերին, իր ափերը՝
նրա ափերին և երբ կռացավ նրա վրա, երեխայի մարմինը տաքացավ: 35 Եվ ելավ ու տան
մեջ մեկ այս կողմ, մեկ այն կողմ գնաց և վեր կացավ ու կրկին կռացավ նրա վրա.
երեխան յոթ անգամ փռշտաց. երեխան բացեց իր աչքերը: 36 Նա կանչեց Գեեզիին.
«Կանչի՛ր այդ սունամացի կնոջը»: Երբ նա նրան կանչեց, և կինը եկավ նրա մոտ, նա
ասաց. «Ա՛ռ քո երեխային»: 37 Կինը եկավ ու ընկավ նրա ոտքերը, մինչև գետին
խոնարհվեց և վերցնելով իր որդուն՝ գնաց: